ՊՈՒՍԱՆԵԼԻԱՕԹՆԵՐՈՒԴ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2164—ՀԻՆԳՇԱԲԹԻ—17—ՕԳՈՍՏՈՍ—Ն. Տ.—29—ՕԳՈՍՏՈՍ—1878

ԳԱՅՄԱՆԵՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 Մկ.
» » Գաւառաց » 10 Մկ.
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 4 Մկ.
» » Գաւառաց » 5 Մկ.
Ցանուցման տողը մէկ անգամի համար 3 գրուշ։ Երիւղ անգամի համար 2 գրուշ։ Աւելի անգամներու համար գաղ տակարութիւն կայ։

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ

ԳԱՅՄԱՆԵՔ

Դուրս գալու աւագրաց ծանրոց ծախքը Խմբագրութեան վրայ է։
Լրագրոյս վերաբերեալ նամակներ կամ որ և իցէ գրութիւն Խմբագիրը—Տնօրէնին ապահովագրեալ։ Գալատիա Յանծրքճրլար Ճաստէյի թիւ 198։ Նօրս խան։ Մասիսի գրասենեակը։
Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀՈՍԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 17 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Աւստրիական զօրքն օգոստ 9/21 ին վճռական յաղթութիւն մը տարաւ Պոսնիոյ ապստամբաց վրայ, որք ցիրուցան եղան։ Հեռագիր մը կըսէ թէ ապստամբաց գլուխները գրեթէ ամենն ալ սպաննուած են։ Պաշտօնական տեղեկագրի մը խօսքին նայելով, Պոսնա—Սէրայի առումն օգոստ. 8/20ին տեղի ունեցեր է։ Օգոստոս 3/15ին Թէկէլիօֆ զօրավարը Զէնիցայէն դէպ 'ի Պոսնա—Սէրայ ղըրկուած էր, և թէպէտ ճանապարհին իւր վրայ յարձակումներն անպակաս էին, հետևեալ օրը Պուղիչ հասած էր՝ վեց հոգի միայն կորուսանելով։ Օգոստոս 3/15ին Ֆիլիբօվիչ զօրավարը երեք գունդով Վիշօքայի դէմ քալեց։ Ապստամբք Պոսնա դեռին ելերքն ամուր դիրք մը բռնած էին, և հրացանով պատերազմի սկսան. իրենց մէջ քանի մը խումբ Բէտիֆ զօրք կը տեսնուէր։ Ֆիլիփովիչ 'ի սկզբան յամր կը քալէր, բայց երբ Մուլլէրի զօրախումբն ևս հասաւ, ուժգին յարձակմամբ մը Վիշօքան գրաւեց, ուր բազում պատերազմական մթերք գտնուեցաւ։ Աւստրիացիք նոյն օրն 82 վիրաւոր ունեցան, որոց երկուքն սպայ էին, և 4 հոգի ալ մեռան։ Օգոստոս 7/19ին, Ֆիլիփովիչ Պաղնա անուն տեղը բանակեցաւ, իսկ Թէկէլիօֆ զօրավարը Սէմէնովիչ խանը կառնէր։ Ֆիլիփովիչ հետապնդութիւն մ'ընելով տեսաւ որ թշնամին Պոսնա-Սէրայի մօտ Սաքաֆիցայի լեռը դրաւած էր 4 թնդանօթով։ Օգոստոս 8/20 ին առաւօտուն Թէկէլիօֆ զօրավարին հրաման տրուեցաւ Բասանօ—Պրաոյի կիրճը գրաւելու։ Միւս կողմէն երկու զօրաբաժինք Պոսնա-Սէրայի վրայ կը քալէին։ Աւստրիական զօրքը թանձր մըշուշի մը ժամանակ յառաջ քալելով նշանակեալ դիրքերը գրաւեցին։ Ապստամբք նախ Թէկէլիօֆի զօրաբաժինը տեսան և Պոսնա—Սէրայի ամրոցէն ռումբ նետել սկսան։ Անմիջապէս Վոլէզ գնդապետին թնդանօթները կրակ բրին, և իւր զօրքը Ֆրանթէնի դիրքն առաւ։ Բայցիկ գնդապետը դժուարութեամբ կելներ Մէճիտիէի բլուրը, և հինգ վեց ժամէն Տէպէլօ-Պօրօ լերան գագաթն ելաւ, ուրկէ իւր լերան թնդանօթները կայծակնահար ընելով լռեցուցին ապստամբաց թնդանօթները։ Աւստրիացւոց հետևակազօրը Պոսնա—Սէրայի քաղաքը մտաւ, ուր փողոցներուն մէջ կռիւ մ'սկսաւ, ամեն տուն և պատուհանէ Աւստրիացւոց վրայ հրաղէն կարձակուէր։ "Կանայք իսկ, կըսէ պաշտօնական տեղեկագիրը, անսահման մոլեռանդութեամբ մղեալ՝ պատերազմին կը մասնակցէին," Հիւանդներով և վիրաւորեալներով լի հիւանդանոցէն իսկ ժամ ու կէսի չափ հրաղէն կը պարպուէր Աւստրիացւոց վրայ։ Ֆիլիփովիչ զօրավարն իւր տեղեկագրին մէջ կըսէ որ եթէ ապստամբք Աւստրիացիներէն նուազ կանոնապահ և նուազ վեհանձն թշնամի մ'ունենային իրենց առջև, բոլոր Պոսնա-Սէրայի ժողովուրդը սուրէ կանցնէր և քաղաքն հիմնայատակ կըլլար։ Վերջապէս կէս օրէն ետև Աւստրիացիք քաղաքին տիրեցին, և ապստամբք կօրաղդայի և Բօկալմիցայի կողմը փախան։ Կէս օրէն չորս ժամ յետոյ, Աւստրիական դրօշը պարզեցաւ միջնաբերդին վրայ, աղդային երգոց եղանակաւ։

Աւստրիացւոց այս յաղթութիւնները Հերսէգի և Պոսնիոյ մէջ իսլամայ դիմադրութեան եթէ ոչ բոլորովին վերջ տուած՝ գոնէ մեծ հարուած տուած են։ Ասկէ ետև լեռնային տեղեր կրնան տակաւին ապստամբաց խումբեր դիմադրութիւն և յարձակումներ ընել, սակայն չորս նոր զօրաբաժին օգնութիւն պիտի դային Աւստրիացւոց, և տարակոյս չկայ որ այս մեծ զօրութեամբ քիչ առնէն խաղաղութիւնը կրնայ վերահաստատիլ՝ եթէ նոր դէպքեր չպատահին։ Իսկ Իսլամք Եէնի-Պազարի նահանգին մէջ կը դումարեին, և Մէթրօվիցայի մօտերն ալ մեծ բազմութեամբ Ալպանիացիք համախմբեալ էին, ըստ ոմանց մինչև յիսուն հազար, որպէս զի եթէ պէտք ըլլայ՝ դիմադրեն։ Կըսուէր թէ Աւստրիացիք Եէնի—Պազարի և Մէթրօվիցայի վրայ ևս պիտի քալեն, բայց չգիտցուիր թէ այս զրոյցն ըստ՞յդ է, քանզի ըստ Պէրլինի դաշնադրութեան՝ Եէնի-Պազարի նահանգն ուղղակի Բ. Դրան իշխանութեան ներքև պիտի մնար։

* * *

Հելլենական խնդիրը տակաւին առկախ կը մնայ։ Բ. Դրան վերջին ծանուցագրին պատասխանները դալ կսկսին։ Գաղղիոյ դեսպանատան առաջին թարգման Պ. Տը Լ'օնժիվլ երկուշաբթի օրն իւր կառավարութեան կողմէն ծանուցագիր մը տուաւ Մեծ—Եպարքոսին, 'ի պատասխանի Բ. Դրան շրջաբերականին։ Գաղղիա կը յորդորէ Բ. Դուռն որ Պէրլինի Տէրութեանց խորհրդոյն համաձայն Հելլենական խնդիրը կարգի դնէ։ Այս յորդորը գրեթէ բոլոր մեծ տէրութեանց կողմէն կը տրուի, առանց 'ի բաց առնլոյ զՄնգղիա, որոյ վրայ կասկածներ կային թէ Հելլենաց դատը կը լքանէ։ Բայց արդեօք Բ. Դուռն իւր ձեռօք հող տալու պիտի գիջանի՞, կամ կարող պիտի լինի՞ զիջանիլ. այս ուրիշ խնդիր է։ Դիտողութիւն եղաւ թէ Պէրլինի Տէրութեանց խորհուրդը Թուրքիոյ մէջ Թուրքերը կենալը մոռնալով որոշումներ տուաւ. այս մոռացկոտութեան արդիւնքը տեսնուեցաւ Պոսնիոյ մէջ. Նոյնը կրնայ ըլլալ նաև Թեսալիոյ և Եպիրոսի մէջ. Պօշնագներուն ապըստամբութեան մէկ տիպարը կրնայ տեսնուիլ Արնաւուտներու ապստամբութեան մը մէջ. Լազերն արդէն կը յայտարարեն թէ պիտի դիմադրեն և Պաթումի մէջ Անգղիական դրօշ պարզելով Ռուսաց հետ պիտի կռուին։ Թէպէտ Անգղիոյ կառավարութիւնը խորհրդարանին մէջ յայտարարեց թէ Լազերուն այս շարժման պատասխանատուութիւնն իրեն չվերաբերիր, այսու ամենայնիւ կըրնայ ըլլալ որ Լազերն յամառ դիմադրութիւն մ'ընեն։ Գարատաղի իշխանը Բ. Դրան դիր գրեր է առաջարկելով որ Պէրլինի դաշնադրութեան համեմատ սահմաններն և երկու կողմանց մէջ յարաբերութիւնք վերահաստատին, բայց Արնաւուտները, քանի մը տեղեր Գարատաղի տալու չեն հաճիր։ Այսպէս ամեն կողմէ դժուարութիւնք և դիմադրութիւնք կը ծագին, և Պէրլինի դաշնադրութեան դործադրութիւնը ծանր արդելքներու կը հանդիպի։ Այս մասին տէրութիւնք դիտողութիւններ կուղղեն եղեր առ Բ. Դուռն, և իրենցմէ ոմանք դեն 'ի ձեռին հաղիւ կը յաջողին դաշնադրութեան քանի մը տրամադրութիւնները դործադրել։ Դաշնադրութեան ակադեմական մասերն, ինչպէս են բարեկարգումներ, հայն, այս վիճակին մէջ բոլորովին մեռեալ թուղթ կը մնան։ Գերմանիոյ նոր դեսպան Հաձֆելա կոմսին հրահանգ տրուած է եղեր որ մայրաքաղաքս հասնելէ ետեւ ազգասիրութիւն ընէ Բ. Դրան Պէրլինի դաշնադրութիւնը դործադրելու։ Այս առաջարկին Ռուսիոյ և Աւստրիոյ կառավարութիւնք կրնան մասնակցիլ, քանզի կըսուի թէ երից կայսերաց համաձայնութիւնը նորէն ամրցած է, և Հռոդոպի իսլամայ վրայ Ռուսաց և Պուլղարաց կողմէ դործուած բռնութիւնները քննող Եւրոպական յանձնաժողովին Գերմանացի Ռուս և Աւստրիացի անդամք տեղեկագիրն ստորագրել չեն ուզած։ Այս իրողութիւնները կրնան ցուցնել ներկայ խառնաշփոթ վիճակը։ Պէրլինի դաշնադրութիւնն իւր բոլոր անկատարելութիւններով հանդերձ քաւոսին տեղ կանոնաւոր վիճակ մը հաստատելու փորձ մ'էր։ Եթէ դժբաղդաբար այս փորձն անյաջող ելնէ, քաւսան առաւել բուռն կերպիւ պիտի վերադառնայ և այն ատեն վախճանը դուշակել անկարելի է։ Բայց յուզեալ ազգային և ժողովրդական կիրքերն ու նախապաշարումները կրնա՞ն խոհեմութեամբ շարժիլ։ Հոն է բուրը խնդիրն, և կը մնայ տեսնել թէ պետական մարդոց իմաստութիւնը պիտի յաջողի՞ քաւսին առաջքն առնուլ։

* * *

Գաղղիական Թան լրագրին Պերլինի թղթակիցն Հայկական խնդրոյն նկատմամբ Պերլինի Տէրութեանց ժողովին մէջ անցած անցեալ վրայ հետևեալ կարեւոր տեղեկութիւնները տուած ըլլալով, արժան կը համարինք մեր ընթերցողաց հաղորդել։

"Թուրքական Հայաստանի մէջ անհրաժեշտ բարեկարգումներ տրամադրող Այսթէֆանոսի դաշնադրութեան 16 րդ յօդուածին տեղ աւելի նշանաւոր յօդուած մը դրուեցաւ, և յուլիս 11 ին օրը քուէարկուելէ ետև վերջապէս քննուեցաւ և ուղղուեցաւ։

"Օմ. լիազօր պատուիրակները փափաքեցան որ Հայաստանի վերաբերեալ յօդուածին յաւելուածն աւելի անորոշ ձև մ'ունենայ, բայց Գաղղիոյ լիազօր պատուիրակները դէմ կեցան և աւելի ճիշդ և որոշ ձև մը տուին անոր, որով նշանակութիւնը կրկնապատկեցաւ։ Ցաջողեցան քանի մը բառ մոցնել, որոց զօրութեամբ տէրութեանց դեսպաններն ոչ միայն իրաւունք ունին հսկելու պահանջելու Օմ. կառավարութենէն՝ խոստացած բարեկարգմանց մասին, այլ և իրենց հիւպատոսներուն և դործակատարաց միջոցաւ հսկողութիւն ընել։

"Ահա այս կրցաւ ընել Գաղղիա Հայաստանի համար, որոյ շահերն Լուանդեամբ կը պաշտպանէր։

"Օմ. լիազօր պատուիրակները սաստկապէս հակառակեցան Հայ պատգամաւորաց ներկայացուցած նախագծին, այնպէս որ այս վերջիններն յոյսերնին կորուցին անոր ընդունուելէն։

"Ահաւասիկ Հայոց ներկայացուցած նախագիծը։

"Հայք կը խնդրեն որ Լիբանանի "վարչութեան ձևով կազմութիւն մը "տրուի Հայաստանի, Հայ կուսակալ"լով, Եւրոպական յանձնաժողովոյ մը "ձեռօք շինուելիք կանոնադրութեան "մը համաձայն, որոյ դործադրութեանը պէտք է հսկէ յիշեալ յանձ"նաժողովը։"

"Օմ. լիազօր պատուիրակներն յայտարարեցին, որ եթէ Օսմանեան Հայաստանի ինքնօրինութիւն տրուի, կիսով չափ ուռճացած կըլլայ։

"Այս փաստին ծանրակշռութեան վրայ չեմ կրնար դատողութիւն ընել, բայց, ինչպէս կերևի, Անգղիոյ լիազօր պատուիրակներուն և Տէրութեանց ժողովոյ մեծամասնութեան վրայ ծանր ազդեցութիւն մ'ընելով համոզեց զանոնք։"

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 26 օգոստ.

Պաշտօնական ծանուցման մը համեմատ ախեզերական արուեստահանդէսին մրցանակաբաշխութիւնն հոկտ. 21ին պիտի կատարի ։

Թանձէր 26 օգոստ.

Քօլէռան կը ծաւալի Մարոքի ծովեզերեայ գաւառաց մէջ ։

Լոնտրա 27 օգոստ.

Մօրնինկ Բօսթ կըսէ թէ հելլենական սահմաններուն ուղղութեան խնդրոյն նրկատմամբ միջնորդութեան նախաձեռնութիւնն Իտալիա և Գաղղիա պիտի ընեն ։ Իսկ Ռուսիա և Գերմանիա, կը յաւելու յիշեալ թերթն, Աւստրիոյ հետ են, որ Յունաստանի նկատմամբ լաւ տրամադրութեան մէջ չէ՞ուիր ։

Վիէննա 27 օգոստ.

Պոսնա—Սէրայէն լուր կուտան թէ թաղական խորհուրդ մը կազմուեցաւ հոն ամէն կրօնից անդամներէ ։

Պէլկրատ 27 օգոստ.

Նախարարութիւնն հրաժարական տըւաւ, և իշխանն ալ ընդունելով Պ. Րիսթիչի յանձնեց նոր նախարարութեան մը կազմութիւնը ։

Վիէննա 27 օգոստ.

Պոսնա—Սէրայի մէջ յաղթութեան ալըստամբք Սերվիոյ սահմանագլխին մօտ համախմբեցան ։

Աւստրօ—Հունգարիոյ և Գարատաղի միջև համաձայնութիւնն ստացուած է ։ Նիքիդա իշխանն իւր պահելիք չէզոքութեան ապացոյց մը տալու համար ապըստամբներուն արգիլեց զէնքով իւր երկիրը մտնել, և հրաման բրաւ որ իւր հողը փախչող Թուրք ապստամբները Նիքշիչի մէջ վար դնեն ։

Այս առաւօտ հասած հեռագիրք

Պէրլին 28 օգոստ.

Պէրլինի դաշնադրութեան վաւերացմանց փոխանակութիւնն այսօր պիտի կատարուի արտաքին գործոց պաշտօնատան մէջ ։

Լոնտրա 28 օգոստ.

Օսմ. Փոխ.	13 15/16	
Փոխ.	1865	20 1/2
»	1869	19
»	1871	52 1/2
»	1872	27
»	1873	—
» Եգիպտ.	76 7/8	
Անգ. Փոխ.	94 5/8	

Փարիզ 28 օգոստ.

Օսմ. Փոխ. 14,

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքիս Թուրք լրագրաց խօսքին նայելով՝ այս օրերս Բ. Դրան ուշադրութիւնը գլխաւորապէս զբաղեցնող նիւթը՝ բարենորոգմանց խնդիրն է ։

Ամէն բանէ առաջ Անգլօ—Թուրք դաշնագրութեան համաձայն Ասիական Թուրքիոյ մէջ 'ի գործ դրուելիք արմատական բարենորոգմանց պատրաստութեանն զբաղած է, որք հետևեալ հինգ հիմնական կէտերուն վրայ կ'ամփոփին. 1՝ ոստիկանութեան նոր զինուորութիւն մը կազմել. 2՝ դատանորդի արոց անդ կալուածական կամ հօղային տուրք հաստատել. 3՝ ամեն գաւառի մէջ ելմտական տեսչութիւն մը հաստատել. 4՝ դատարանները վերակազմել ։

Նոր ոստիկանութիւնն երկու դասի պիտի բաժնուի. մէկ դասը քաղաքական իշխանութեան պիտի ծառայէ, միւսը դատական իշխանութեան ։

Կալուածական կամ հօղային տուրքին որոշելու համար՝ վերջին հինգտարուան տասանորդի արոց միջին հաշիւն հիմ պիտի բռնուի ։

Ելմտական տեսչութեան պաշտօնը պիտի ըլլայ իւրաքանչիւր կուսակալութեան մէջ՝ երկրին ելմտական վարչութիւնը, համարակալութիւնն և գաւառին բոլոր մտուկներուն վրայ հսկողութիւն ։ Այս տեսուչներուն մէջ իմէ ստարագրի գտնուի, Կ. Պոլսէն կախում պիտի ունենայ և Բ. Դրան պատասխանատու պիտի ըլլայ։

Դատական վերակազմութեան հիմը պիտի ըլլայ փաշական ուրիշ ամէն ճիւղերէն կատարեալ անկախութիւն։ Տրապիզոնի, Կարնոյ, Տիարպէքիրի, Պաղտատի, Իզմիրի և Հալէպի նահանգաց մէջ վերաքննութեան ատեաններ պիտի հաստատուին, որոց մէջ ձեռնհաս Եւրոպացիներ ալ անդամ պիտի ընդունուին ։

Երէկ իրիկուն մայրաքաղաքիս Ռուսական դեսպան Լոպանոֆ իշխանը Թօփխանէէն և Աքօպէյէֆ զօրապետաց հետ Եըլտըզի կայսերական պալատն 'ի ճաշ հրաւիրեցան ։

Երրեմն Իւզդաֆի վերատեսուչ Քէմալ փաշան, կայսերական կանոնացին ծախուց և միանդամայն փախճանելոյ Սուլթան Ազիզի դերդաստանին մատակարարութեան վերատեսուչ անուանեցաւ ։

Բազմաթիւ Ռուսական Անգլիական և այլ շոգենաւներ շարունակ Ռուսական զօրք կառնուն Այաստեֆանոսէն ու Բույուքտէրէէն և Սև ծով կը տանին։

Բ. Դուռը նոր զօրագունդեր կը պատրաստէ Յունաստանի սահմանագլուխը ղրկելու ։

Խօզանցի Ահմէտ փաշան, որ Բ. Դռնէն հանգստի թոշակ ստանալով Կ. Պոլիս կը բնակէր, անցեալները Սեբաստիա երթալու հրաման ստանալով Բ. Դռնէն, ուղղակի Խօզան գընացեր և խել մը մարդիկ գլուխը ժողվելով ապստամբութիւն հաներ է։

Բ. Դուռն այս ապստամբական շարժումը չուտով զսպելու համար վեց փաշա կանոնաւոր զօրք և ռաշմանքերք ղրկեց Իզզէթ փաշայի հրամանատարութեան ներքև. միանգամայն Սուրիոյ կուսակալ Ճէվտէթ փաշային հրաման գնաց որ անմիջապէս քանի մը փաշա զօրքով այն կողմըն երթայ, և Իզզէթ փաշային աջակցի ։

Մայրաքաղաքիս անգղիական դեսպան Սըր Հ. Լէյարտ երեքշաբթի օրըն Եըլտըզի կայսերական պալատն երթալով երկար խորհրդակցութիւն մ'ըրաւ Վեհ. Սուլթանին հետ 'ի ներկայութեան Խէմ—Խայարքօսին ։

Կըսուի թէ խորհրդակցութեան նիւթն Ասիոյ մէջ 'ի գործ դրուելիք բարենորոգումներն են եղեր, որոց վրայ դեսպանը ծրագիր մը ներկայացեր է Վեհ. Սուլթանին ։

Վեհ. Սուլթանը վերջին պատերազմին մէջ վիրաւորեալ և հիւանդ զօրաց դարմանին համար Նպաստ Նուիրող ազնուափառ տիկնանց վարձատրութիւն ընելու համար յատուկ պատուանշան մը սահմանեց «Նիշանը Մուավէնէթ» անուամբ, երեք կարգի բաժնուած, և արդէն առաջին կարգէն մէկ մէկ ականակուռ պատուանշան շնորհեց Եգիպտոսի Խտիվին մօրն ու տիկնոջն, ինչպէս նաև վախճանեալ Քեամիլ փաշային տիկնոջը։

Երեքշաբթի օրը Ռուսաց Թօփխանէէն զօրավեան Սպարապետի դուռըն եկաւ յայցելութիւն պատերազմական գործոց նախարարին, և զինուորական պատիւներով ընդունուեցաւ ։

Երէկուան վագրէթի մէջ կը կարդանք թէ Փիլիպէյի Հաճի Արիֆ անուն Թուրք մը՝ վերջին պատերազմին ժամանակ մարդասպանութիւն ըրած ըլլալու ամբաստանութեամբ այս օրերս Ռուսական ատեանէն դատուելով մահապարտ վճռուեր է։ Բարձր. Սաֆվէթ փաշան ծանուցագիր մը ղրկելով Ռուսական դեսպան Լոպանոֆ իշխանին, պատժոյն գործադրութիւնն ետ ձգել խնդրեր է, յիշեցնելով թէ Պէրլինի դաշնադրութեան ստորագրութենէն վերջը պատերազմի միջոցին եղած ոճրագործութեանց հեղինակներուն ընդհանուր ներում շնորհուած ըլլալով Հաճի Արիֆին ալ՝ եթէ իրօք այնպիսի բան մ'ըրած է՝ չկրնար այժմ անոր համար մահապարտ վճռուիլ ։

Սոյն ծանուցագրին վրայ Հաճի Արիֆի մահապարտութեան վճիռը չէ գործադրուած։

Դաղի Մուխթար փաշան յատուկ պաշտօնով երէկ Կիրիտ գնաց ։

Կըսուի թէ պաշտօն տրուած է իրեն՝ ապստամբաց հետ համաձայնութիւն մը գոյացնելու, և եթէ չյաջողի, բռնութեամբ ապըստամբները զսպելու ։

Կըսուի թէ ծխախոտի և ըմպելեաց վրայ դրուած նոր տուրքը մէկ շաբաթուան մէջ միլիոն մը ղրշէն աւելի հասոյթ տուեր է ։

Զարմանալի է որ մինչև մէկ կողմանէ թղթադրամոց բարձման համար նորանոր տուրքեր կը դրուին հասարակութեան վրայ, թղթադրամին գինը՝ փոխանակ բարձրանալու՝ ընդհակառակն աւելի կիջնէ։ Ոսկիի վրայ տուրք դրուելէն առաջ լիրային գինը թղթադրամով 250 ղրշ էր, այսօր 300ի եղած է ։

Մէհմէտ Էֆէ լրագիրն իւր շաբաթ աւուր թուոյ նախարարական մտաւոր փոփոխութեանց լուրեր հրրատարակած ըլլալուն պատճառաւ՝ բըռնաբարողութիւն մ'ստացաւ մամլոյ տեսչութենէն ։

Ուրբաթէն շաբաթ լուսնալու գիշերը Հէբէքէի կայսերական գործարանին մէջ հրդեհ ծագելով՝ առաջքը չկրցաւ առնուիլ և ամբողջ գործարանն այրեցաւ ։

Եղած վնասը 25000 լիրա հաշիւ կըլլայ ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԼՈՒՇԱՄԲ ՈՒՄՕՒՄԻՒ

16 օգոստ. չորեքշաբթի իրիկուն		14,36
17 օգոստ. հինգշաբթի առաւօտ		
բացուեցաւ		15,42
կէս օրին		15,40
Բուժիլի երկաթուղի	փր.	58 75
Թղթադրամ	մր.	297

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Կ. Պոլիս 16 Օգոստոս

Օսմ. ԹՀ Ժ. Ընկեր. բաժ. Անգ.	մր.	4,13
» փոխանակութեան	»	4,
Կ. Պոլսոյ Պանքային	»	6,13
Քրէտի Ժ. Ընկեր.	»	5,22
Քրէտի Օսմ. Թիւրք	»	—
Փոխ. 1863	Ֆր.	81
» 1865	»	85
» 1869	»	81
» 1872	»	26
» 1873	»	75
Թրանվայ	Օսմ. մր.	1 45

ԱԶԴԱՐԻՐ

Կայսերական կառավարութիւնը Պատրիարքարանի խնդրանօք Պատրիարքական խորհրդական Գեր. Խորէն արքեպիսկոպոսին Բ. կարգի Մէճիտիէ և Սերաստիոյ առաջնորդ Գեր. Պետրոս վարդապետին Դ. կարգի Օսմանիէ պատուանշան շնորհեց։

Կարսէն յուլիս 28 թուով հետևեալը կը գրեն Տփխիսի Մշակ օրագրին.

Կարս քաղաքը Ռուսաց կառավարութեան ձեռքը անցնելուց յետոյ բոլորովին նոր կերպարանք առաւ և օրից օր սկըսվում է բարեկարգվել շնորհիւ կառավարութեան ջերմ աշխատութեանը ։ Փողոցների սալայատակների խանգարված տեղերը նորոգել են և շօսէ են շինում մեծ փողոցների վրա, ամէն յարմարաւոր տեղում և փողոցների անկիւններում արտաքնոցներ են շինում, որոնց պակասութեան պատճառով ամեն տեղ ապականված էր. գիշերները լամպաներով լուսաւորված են բոլոր չուկաները և փողոցները. շատ վաղուց չէ շինվեցաւ հասարակաց զբօսարան, և այն պարտէզում երեկոները հնչվում են նուագարաններ և պարահանդէսներ են լինում ։ Տաճիկները զարմանում են Ռուսաց աշխատող և բարեկարգող ձեռքերի վրայ ։

Վաճառականութիւնը լաւ դրութեան մէջ է, որը մեծ մասամբ օտարաքաղաքացիների ձեռքն է. ամենից շատ լցված են Ալէքսանդրապօլցիք, որոնց ձեռքին են մեծ և ապրանքով հարուստ խանութները, բաղանիները և հիւրանոցները, իսկ մեխանաների և խօհանոցների թիւը չկայ ։

Ս. Պետերբուրգից անցեալ օրերը կոմսուհի Նինա Իվանօվնա Լօրիս—Մելիքօվ ուղարկել էր Կարսի Հայոց եկեղեցուն ընծայ մի ոսկեպատ Թանկագին աւետարան, որը ամսի 11 ին նորին գերազանցութիւն Կարսի Օբլաստնի Նաչալնիկ Գեներալ—Լէյտէնանտ Փօպկօ իր կառավարութեան բոլոր աստիճանաւորների հետ միասին բերեց եկեղեցի ։ Այդ օրը պատարագը ձայնի էին թողած, եկեղեցին լցված էր բազմութեամբ, որ տեղ կատարվեցաւ 'ի յիշատակ Լօրիս—Մելիքեան և երկայնաբազուկ Արղութեանց ազգատոհմերի ննջեցեալների հոգեհանգիստ ։ Գեներալ—Լէյտենանտ Փօպկօ և բոլոր աստիճանաւորները կանգնած էին մինչև եկեղեցու աւարտը ։ Պատարագից յետոյ Կարսի անուանի քաղաքացիները Էհրամճեան Գէորգ աղա, Յակոբ աղա, Դուկաս աղա և հաճի Ցարութիւն աղա եւ, 'ի նշան շնորհակալութեան մի փառաւոր նախաճաշիկ տուեցին առաջնորդարանում, ուր շամպանեայ գինիների շատ թասեր դատարկվեցան Ն. Կ. Մ. քրիստոնէից պաշտպան Աղէքսանդր Նիկօլաեվիչի կենաց, Մեծ Իշխան Միխայել Նիկօլայէվիչի, Լօրիս—Մելիքեանցի, կոմսուհի Նինայի կենաց և այլ շատ կենացների հետ Ռուսաց քաջ զինուորների կենացը ։

Կարսի հոյակապ հին մայր եկեղեցին, որը Հայոց Աբաս Թագաւորի շինածն է, Տաճկաստանի կառավարութիւնը մինչև Կարսի առնելը իբրև պահեստի տուն ծառայեցնում էր սուրբ եկեղեցին իւր սիւնաքին, այժմ կառավարութիւնը խոստացել է վերադարձնել Հայոց ։

Կարսի Օբլաստնի Նաչալնիկ Գեներալ—Լէյտենանտ Փօպկօ, այց ընելով Շիրակի և Շօրագեալի սահմանին, և Հայոց Անի քաղաքի աւերակներին, և մեծ ուրախութեամբ տեսնելով Տաճկաստանի կառավարութեան Հայոց այդ հնադարեան աւերակների և այլ վանքերի վրայ ունեցած անասելի անհոգութիւնը և անգըթաբար հիմնայատակ անելը, հրամայել է շրջանի կառավարիչներին անհատ անձինքների ափրապետութեննից առնուլ ազգային սեփականութիւնները և վերադարձնել ու պաշտպանել հնութիւնները, և Կօշավանքի առաջնորդին յանձնեց Անիի նոր վանքերից մէկում նստել և հաստատել միաբանութիւն ։

Գարձեալ նոյն քաղաքէն հետևեալը կը գրեն յուլիս 17 թուով.

Այս ամսի 16 ից գէպի 17 գիշերը Կարս քաղաքում մի մեծ հրդեհ ընկաւ ։ Հրդեհը խիստ սարսափելի էր, ժամը 1ից սկսվել էր, տևեց մինչև լոյսը և 8 ին հազիւ հանգաւ ։ Հրդեհը Զարսուի չուկայի մէջ էր, խանութների վեց շարք փառվեց,

մօտ 200 խանութից աւելի։ Քչերը կարողացան ազատել իրանց ապրանքները։ Ազատած ապրանքներն էլ շատը յափշտակվեցան տաճիկներից։

Բազմութիւնը անչափ էր թէ՝ բնակիչներից և թէ՝ զօրքերից, բայց ոչինչ գործիք չկար. ինչ կարող էին անել. կացին և գերաններ անգամ չէին կարող տանել որ գոնէ չրջակայ խանութներից մի քանիսը քանդելով՝ միւսները ազատէին։

Խռնակութիւնը անօրինակ էր. բոլորը շուարած էին. պոլիսիականները նոյնպէս. բայց մի քանիսի հսկողութեամբ բանտարկվեցան գողացողներից մի քանիսը։

Տաճիկների մի քանի խանութներում գտնվելով փամփուշտներ և վառօդ, մեծ թնդիւն էր լինում։ Ասում էին որ մի քանի մարդիկ վիրաւորվել են, և մի քանիսն էլ կրակի զոհ են դարձած փլատակների տակ։

Կորուստը շատ մեծ է. կէս միլիոնից աւելի է հասնում։

Այսօր հարիւրաւոր մարդիկ զրկված ամեն կարողութենից՝ լալով մնացին դալիս։

Ազգային դատարակութեան գլխաւոր և բազմաչխատ մշակներին մին, Ազգ. Երեսփոխանական և Ուսումնական խորհրդոյ անդամ Սիմոն էֆէնտի Միքայէլեան, կարճատև հիւանդութեամբ մ'իւր մահկանացուն թնդրեց երեքշաբթի օրն 'ի հասակի 52 ամաց՝ 'ի խոր սուգ համակելով իւր ընտանիքը ազգականքն և բոլոր բարեկամները։

Յուզարկաւորութեան տխուր հանդէսն երեկ կատարեցաւ մեծ շքով 'ի Ս. Սահփանեան եկեղեցին խոսդիւղի, և մարմինը դիւղին գերեզմանատունը թաղուեցաւ։

Հանգուցեալ Սիմոն էֆէնտին իւրկիւտարի առաջին ճեմարանին աշակերտներէն էր, ուր չափաբերական գիտութեանց յատուկ յարմարութիւն ցոյց տալով, ճեմարանին փակուելէն ետոյ Պէպէքի բողոքականաց վարժարանին մէջ իւր ուսմունքը շարունակեց մեծ յաջողութեամբ, և յետոյ ազգային վարժարանաց մէջ թուագիտութեան, գրահաշուի, երկրաչափութեան և աշխարհագրութեան դասատուութիւն ընել սկսելով, երգուն և հինգ տարի աշխատութիւն տուած և հազարաւոր աշակերտներ հասուցած է։ Քանի մ'ալ աշխատասիրութիւններ ունի, որոց մէջ նշանաւոր է իւր աշխարհագրութիւն, որ ազգային վարժարանաց մէջ կը գործածուի։

Բաղդը և հեղ բնաւորութեան տէր ըլլալով, զինքը ճանչող և իրեն հետ յարաբերութիւն ունեցողներուն ամենուն ալ սէրն ու համակրութիւնը գրաւած էր։

Այս ամեն հանգամանքներով և մանաւանդ իւր հմտութեամբն ու արդիւնքով հանգուցեալ Սիմոն էֆէնտին ազգիս ամենապիտանի և ընտիր անդամներէն մին էր, որոյ տարաժամ մահն արդարև դառն և անդարմանելի կորուստ մ'է ազգին համար։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

Թէքիրտաղ 8 օգոստ. 1878

. . . էֆէնտի.

Նոյեմբեր 27 չաբաթի երկուշաբթիէն ցչաբաթ քաղաքիս Ս. Խաչ թաղի Յիսուսեան բարեհամբաւ երկսեռ վարժարանի աշակերտաց հարցաքննութիւններն աւարտած ըլլալով 'ի ներկայութեան և 'ի ձեռն հրաւիրեալ պատուարժան քննչաց, ընդ օրս և ես գտնուելու պատիւն ունէի, այս կիւրակէ և 'ի 6 օգոստոս, նոցա պարգևատրութեան հանդէսը կատարուեցաւ 'ի ներկայութեան Գեր. Առաջնորդ Ս. հօր. զոր շքեղացուցին ոչ միայն երկսեռի սանուց կողմանէ փոփոխ երգեցողութիւնքն, այլ որ առաւելն է՝ նոցին դրաւոր ատենախօսութիւնքն, որք մեծ հաճութեամբ լսուեցան։

Այն երկսեռ վարժարանի տեսչութիւնն և կառավարութիւնն երկու տարիէ 'ի վեր է ընդհանուր թաղեցւոց կողմանէ մասնաւոր ընկերութեան մը յանձնուած է, որ կը բաղկանայ թաղին ուսումնասէր և եռանդուն երիտասարդութենէն, որոց վայելուչ պսակ յօրինեալ են Մեծ. Գէորգ էֆէնտի Շուշանեան և Յակոբ էֆէնտի Աղեկուկեան նախընծայ պատուոյ նոյն դպրոցին, որոց յանձն էնան թաղային ամեն գործ և պաշտօն։ Իսկ երկու սեռի միանգամայն ենթարկութեան պաշտօնն՝ հանդերձ Հայկական և դաղղիարէն լեզուաց դասատուութեամբ՝ յանձն է Պատ. Միհրանայ նախկին արժարատոր և ժիրաժիր աշակերտի Ռէմէոսի Պէրպէրեան, որ արդարև պատիւ կընծայէ թէ դպրոցին և թէ իւր ուսումնասէրն դասատուին։ Իսկ դպրոցին մատակարարութեան խնդրոյն գալով, արդարև խիստ զարմանալի է. վասն զի թաղն ազգատիկ, եկեղեցին ազգատիկ, մինչդեռ 400 դահեկան կանոնաւոր ամսական հասոյթ չունի, 2500էն աւելի ամսական ծախք կընէ. և ահա ասկէ աւելի մեծ ապացոյց չկրնար ըլլալ մեծ գործունէութեան և անձնուիրութեան նոյն սիրայօդ ընկերութեան և խորհրդոյն. որոց արիութիւն և յարատևութիւն և ևս քան զևս յաջողութիւն կը մաղթեմ. մաղթելով և Ձեզ ամենայն բարօրութիւն։

* * *

Եդեսիա 17 յուլիս 1878

. . . Խմբագիր Մասիս պատուական լրագրոյ.

Այս օրերս Կարնեցի Իսլամ դաղթականներ մեր քաղաք հասան, և հեռագրատէ կը չարունակեն դալ։ Ասոնք կըսեն թէ ուրիշ խել մը Իսլամներ ալ յիշեալ քաղաքէն այլուր դաղթեր են Ռուսաց ներկայութեան պատճառաւ։

Քաղաքիս վճռարեկ ատենին անդամ, Սայիտ աղայ, Բերիոյ կուսակալութեան որոշմամբ վերջապէս պաշտօնակ ըլլալով, Մէհմէտ պէյ անոր տեղ յիշեալ ատենին անդամ կարգեցաւ։

Անուանի Խալիլ պէյ, կառավարութեան հրամանաւ, սկսաք եղած պատրաստութեամբք յունիս 29 ին Արուճ ուղևորեցաւ տեղւոյն զիւղերէից մէջ բարեկարգութիւն հաստատելու պաշտօնով։ Խալիլ պէյ իւր պաշտօնին մէջ յաջողեր է. և կըսուի թէ տեղւոյն վրդովիչներէն մէկ քանին ձերբակալ ըրեր է կառավարութեան յանձնելու համար։

Քաղաքիս Պարսկական հիւպատոսին թարգմանը, որ Հռովմէական մ'է, քանի մ'օր առաջ Թուրք խաժամուժէ մը սաստիկ դանակոծուեցաւ։

Մի' զարմանաք ազգային տեղեկութիւններ չգրելուս համար. զի այդպիսի բան մը գրողը մատով կը ցուցնեն հոս մեր մէջ. . . : Այն ատեն ազգային տեղեկութիւններ պիտի գրեմ, երբ երկաթէ սիրտ մ'ստանամ։ * * *

ԼՍԱՐԱՆ

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Յառաջիկայ կիւրակէ՝ օգոստոս 20, Եէնի-Գարուի Ազգային Հայկանոյշ վարժարանին մէջ ժամ 7 ին խլիտի տաւնախօսէ Մեծ. Գաբրիէլ էֆէնտի Եզճեան՝ որ իւրեն նիւթ ընտրած է՝

«ՀԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՔԵՒ, ՀԱՅՆ ՕՏԱՐԱՅ ԱՌՔԵՒ»

Սոյն առթիւ Հայկանոյշ վարժարանի աշակերտուհեաց 'ձեռագործական նիւթերէն մի քանին պատրաստած ենք առ ձեռն վիճակահանութեան դնել, և առ 'ի մեծարանս հանդիսականաց՝ երկսեռ վարժարանի աշակերտներէն ոմանք պիտի տատենախօսեն և աշակերտք դաշնակաւ պիտի երգեն։

Բարեյոյս ենք որ յաւաջադիմասէր ազգայինք յօժարութեամբ կը փութան անձամբ պատուել սոյն հայկական լսարանը։

Եէնի-Գարուի ազգային երկսեռ վարժարանաց ազքատ մանկուոյն դատարակութեան նպաստ մի ըլլալու համար, Լսարանիս մուտք որոշուած է արանց համար 2 դահեկան ողջ թղթադրամ, իսկ իգական սեռի և աղջոյց համար 1 դահեկան։

16 օգոստոս 1878 Խնամակալ

Եէնի-Գարու Հայրապետ Ծ. Վ. Դիմաքսեան

ՕՐԱՑՈՅՑ

ԵՒ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ ՕԳՈՅ

1879 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Յօրինեալ 'ի Դաբանական ուխտէն Ն. Յակոբեանց

ԵՒ

Տպագրեալ 'ի վանս Սրբոյ Յակոբեանց Յերուսաղէմ

Ամեն Հայ դրավաճառաց քով կը դտնուի։ Դին 100 փարա։

ԾՈՒՆԱՒՈՅՈՒՄ

ՏՈՔԹՈՐ Տ. ԱՃԷՄԵԱՆ, քանի տարիներ Վիէննայի մէջ մասնաւորապէս ակնարուժութիւն ուսանելէ ետև՝ Կ. Պոլիս վերադառնալով, շաբաթն երեք օր, այն է երկուշաբթի, չորեքշաբթի ու շաբաթ օրերը ժամ 7 1/2 էն 10 1/2 Պահճէ դաբու Թրամվայ ճատէսի փողոցը թիւ 18 Մէրամէթճեան էֆէնտիի դեղարանն աչքի հիւանդութեանց կը նայի։ 1

ԻԼԱՆ

Ասաքիրի շահանէ իշուն միւպայեա ոլընաճաք օլան սէքիզ պին չուվալ իւչիւնճիւ նիւմէրօ իսթանպօլ տաքիքինին իւչ պին չուվալը թարիխի քարարտա հէման, վէ իւչ պին չուվալը տախի թարիխի քարարտան իթիպարէն օն պէշ կիւն մէրուրինտէ, քուսուր իքի պին չուվալը տախի անտէն պիր հաֆթա միրուրինտէ Այազմա տէկիրմէնի իսկէլէսինտէ մավունայա թէսլիմ օլընճայա քատար վուղու պուլաճաք քեաֆիֆէի մէսարիֆի միւթահիւտէ այիտ օլուպ քուլ ըսմի իլէ մավունա իւճրէթի մավունատան իսրաճիյէսի նիզամիյէ խաղինէսինէ բաճի պուլունմաք վէ պէհէր չուվալը թամ ալթմըշ քըյէ կէլմէք վէ Լամանը լիրայի Օսմանի եիւզ ղրշ հիսապը իլէ մաքպուզ սէնէտինին վիրուտի իլէ մուամէլէսինին խիթամընտա հէման նիզամիյէ խաղինէսինտէն վերիլմէք շարթը վէ շէրայիթը սայիրէի միւթէֆէրիասը իլէ պէհէր չուվալը եանի ալթմըշ քըյէսի եիւզ ղրշա թալիպի էօհտէսինտէ օլուպ աղօսթոս բումինին օն եէտինճի փէնշէնպիհ կիւնիւ քարարը գաթիսի վերիլէճէյինտէն, իթասընա թալիպ օլանլարըն եէվմի մէղքիւրտէ Ցարը Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

14 աղօսթոս 1878

Պապը Սէրասքէրի

Նիզամիյէ էլպիսէ անպարը իշուն միւպայեա օլունաճաք իւչ պին թօփ Մահուտի Ամէրիքան պէղի թարիխի քօնթրաթօտա հէման վէ քեամիլէն թէսլիմ օլընմաք վէ թէսլիմինի միւպէյյին մաքպուզ սէնէտինին վիրուտինտէ էսմանը սիմ մէճիսիյէ իկիրմի ղրշ հիսապը իլէ սալիսի հէման վէ սալիսանի իկիրմի պիր կիւն ֆասլալը իքի թաքսիթ իլէ նիզամիյէ խաղինէսինտէն վերիլմէք շարթը վէ շէրայիթը սայիրէի միւթէֆէրիասը իլէ պէհէր թօփը ալթմըշ ղրշա թալիպի էօհտէսինտէ օլուպ աղօսթոս բումինին օն եէտինճի փէնշէնպիհ կիւնիւ քարարը գաթիսի վերիլէճէյինտէն, իթասընա թալիպ օլանլարըն եէվմի մէղքիւրտէ Ցարը Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

14 աղօսթոս 1878

Պապը Սէրասքէրի

Նիզամիյէ էլպիսէ անպարը իշուն միւպայեա օլընաճաք օլան եէտի պին պէշ եիւզ թօփտան սէքիզ պին թօփա քատար օն իքի լիպրալըք Ամերիքան պէղի թարիխի քօնթրաթօտան իթիպարէն օն իքի կիւնտէն օն պէշ կիւնէ քատար թէսլիմ օլընմաք վէ թէսլիմինի միւպէյյին մաքպուզընքն վիրուտինտէ էսմանը սիմ մէճիս իէ իկիրմի ղրշ հիսապը իլէ նրսֆը հէման նիզամիյէ վէ նրսֆը տիկէրի խաղինէի մէղքիւրէնին վիրէպիլէճէյի մահալտէն հէվալէթէն թէսվիյէ վէ իթա օլընմաք շարթը վէ շէրայիթը սայիրէի միւթէֆէրիասը իլէ պէհէր թօփը ալթմըշ ղրշա թալիպի էօհտէսինտէ օլուպ իշպու աղօսթոս բումինին օն եէտինճի փէնշէնպիհ կիւնիւ քարարը գաթիսի վերիլէճէյինտէն, իթասընա թալիպ օլանլարըն եէվմի մէղքիւրտէ Ցարը Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

14 աղօսթոս 1878

Պապը Սէրասքէրի

Մէքքարի միւթէահիւտի Ապատիլ-Բահիմ ագանին Մարբիքէյ իտարէի ասքէրիէսինտէ տօգսան իշ սէնէսի շուպաթընքն իկիրմի սէօրտիւնճի կիւնինտէն տօգսան սէօրթ սէնէսի մարթընին պէշինճի կիւնինէ գատար իսթիխատամ օլունան էլլի բէս իլէ իսթիխատամ օլընմայաճաղը քէնարսինէ խատէր վերիլան էլլի տօգուզ բէս քի ճէմանն եիւզ տօգուզ բէս հայվանքն իւճրէթի հագգընտա իտարէի մէղքիւրէաէն վիրիլմիշ օլան մաղպաթա զայ օլաուզունատ՝ մէղքիւր մաղպաթա պատէհու զուհուր իտէր իսէ, ամէլ վէ իթիպար օլունմայաճաղընտան հէր քիմ պուլմուշ իսէ՝ թարիխի իլանտէն ոնպէշ կիւնէ գատար նիզամիյէ մուհասէպէսինէ կէթիւրմէսի, վէ միւատէթը մէղքիւրէ խիթամընտա գայտէն օլարագ վիրիլան մաղպաթա իւզէրինէ ուրէթի եաղըլաճաղը մալիւմ օլմագ իչիւն իլան օլընար։

8 աղօսթոս 1878

Պապը Սէրասքէրի

ԻԼԱՆ

Սամսթիատա չըմէնաքֆէր ճատէսինտէ էմանէթի մալի պուլունան թէրպիյէն էլլի իքի զիրա իքի փարմաք արսա պիլ միւզայիտէ պէհէր արշընը նէթմիշ պէշէր ղրշտա թալիպի էօհտէսինտէ թէքէրիւր իլլէտիկինտէն, պուլունան զիատէյ զամիրլէ բագիպ օլանլարըն թարիխի իլանտան իթիպարէն օն պէշ կիւն միւատէթ դարֆընտա Շէհիր էմանէթի հէնտէսէխանէսինէ միւրաճաաթ իլէմէլէրի իլան օլունուր։

14 աղօսթոս 1878

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽԱՇՆԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ

Աշխատասիրեաց Յակոբ Յ. Մկրեան

Ի տէր հանգուցեալ բարեյիշատակ սիրելի որդւոյս հեղինակած յիշեալ պատկերազարդ գրքոյկն՝ որ մասնաւորապէս վարժարանաց համար յօրինուած է, ասկէց առաջ ուժ ղրշ պղինձ դրամի գնով կը ծախուէր թէպէտ, բայց մեռոյցեալ դրամոց օրը ըստ օրէ բարձրանալը նկատելով՝ այսուհետև մէկ 10նոց թղթադրամի վաճառել որոշուած է 'ի դիւրութիւն գնողաց։

կեդրոնատեղին է դրավաճառ Պաղտասար աղա Սրապեանի գրատունը 'ի Մէրճան չարշը։ Ուրիշ Հայ գրավաճառաց քով ալ կը գտնուի։

Աղգային վարժարանաց համար սովորական գնէն զեղչ կըլայ։

Յովհ. տահ. Մկրեան

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՊԱՐԶԵՒԿԵՐԿՆԱԿ—ՏՈՄԱՐ

Որ պարունակէ

Փոխանակարի, Հաշուեցուցի, Բեռնագրի, Վարձագրի, Հաշուընթացի և այլոց ձևեր և օրինակներ

Ի ՊԷՏՍ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Ի Ն. Տէ-Լէհձեանէ

Տպագրեալ արդեամբք և ծախիւք Մեծ. Տիգրան Հիքէնամ Գարակէօզեանի

Կեդրոնատեղին է Պոլիս Մէրճան չարշը թիւ 33 Սրապեան Պաղտասար աղայի գրատունը. Բերայ Մ. Վայրի գրատունը, և ուրիշ Հայ գրավաճառաց քով։

Դին 4աղմեալ օրինակին երեք քառորդ մէճիտ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԿԵՑԱՐԱՑ

Թարգմանեց Ե. Մ. Ս.

Սոյն պատմութեան երկրորդ և վերջին հատորն ալ Իզմիրի Տէտէեան եղբարց տպարանէն 'ի լոյս ընծայուելով, կը ծախուի Եէնի Ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Դին 1 ֆրանք 25 սանթիմ։

ՇԱՀԷՆՆ 'Ի ՍԻՊԻՐ

ԿԱՄ ԴԱՂԹԱԿԱՆ ՀԱՅ

Գրեց Ս. Տէր Սարգիսեանց

Կը ծախուի ամեն Հայ գրավաճառաց քով։ Դին 2 1/2 ֆրանգ։

ՆՈՐ ԴԱՍԱԳՐՔԵՐ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ա. ՄԱՍ

Հրատարակեց Գ. Մսերեան

Ի Զմիւռնիա

Դպրոցներու մէջ գործածուելու համար ընտանի լեզուով գրուած, զբաղարճալի և միանգամայն հրահանգիչ դասագիրք մ'է։

Կը գտնուի Կ. Պոլսոյ Հայ գրավաճառաց քով գին 35 սանթիմ։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԴԱՂԴԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՄԱՐ

Հեղինակ

ԼԷՎՈՆ ԼԸՏԷՐ

Աշխատասիրեաց Ա. Պիպլեանեան

Հեղինակէն հրամանաւ դպրեցեալ

Սոյն գործնական քերականութիւնը Դաղղիոյ երկրորդական վարժարանաց նախապատրաստական կարգերուն համար ընդունուած ամենէն ընտիր և յարմարագոյն դասագիրքն ըլլալով, տարակոյս չկայ որ ազգային վարժարանաց մէջ ալ նոյն ընդունելութիւնը պիտի գտնէ։

Կը գտնուի Կ. Պոլսոյ Գ. Գալաֆեան և այլ գրավաճառաց քով, և Բերա Մօսիւ Վէրսի գրանոցը։ Դին 12 ղրշ։



ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇԱԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1878 *ՕԳՈՍՏՈՍ* 1 *ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ*

ՄԻՆՉԵՒ ՕԳՈՍՏՈՍ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻԶՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժամ	Ելք	Թիւ
11 30	Եկեղեցական Մկզարպ. Պկոյիւքտկրկ, Թարապիա, Եկեղեցոյ, Ամենեղ, Էմիրկ-Պոյաճ. Ր. Հիսար, Պկպկք։	34
12	Ր. և Ա. Գավազկն Եկեղեմ. Մկզար. Պկոյիւքա, Թար. Եկեղք. Էմիրկ. Ր. Հիսար Պկպկք։ (Ուրբաթ օրերը ժամը 12 1/4 ին Արնավ. հանդիսելով)։	28
1	Եկեղեմ. Մկզարպ. Պկոյիւքա. Թարապ. Եկեղեկոյ. Սիմկն. Էմիրկ. Ր. Հիսար, Պկպկք, Արնավ. (Բացի ուրբաթէ)։	18
1 45	Եկեղեմ. Մկզարպ. Պկոյիւքա. Քիրկճպ. Թարապիա, Եկեղք. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պկպկք։	20
2 30	Եկեղեմահալկն Մկզարպ. Պկոյիւքա. Թարապիա, Եկեղք. Էմիրկ. Ր.Հիսար, Պկպկք, Արնավ Գաւր. Պկյկր. Օրթաք. Պկշիկ։ (Ուրբաթ օրերը 2 3/4ին)։	19
3 15	Մկզար. Պկոյիւքա. Թարապ. Եկեղք. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պկպկք, Արնավ. Գաւրուշ Օրթաք. Պկշիկ։	34
4 15	Եկեղեմ. Մկզարպ. Պկոյիւքա. Թարապ. Եկեղք. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Արնավ. Օրթաք. Պկշիկ։ (Ուրբաթ օրերը Գանգ.)։	32
5 15	Եկեղեմահ. Մկզար. Պկոյիւքա. Թարպ. Եկեղք. Էմիրկ. Ր. Հիսար, Արնավ. Պկյկ. Օրթաք. Պկշիկ։	23
6 15	Եկեղեմահալկն Պկոյիւքա. Թարապիա, Պկյքօպ, Եկեղեկոյ, Էմիրկ. Գանկըճա, Ր. և Ա. Հիսար, Գանարկի, Արնավ. Զկնկ. Պկյկր. Օրթաքեկոյ, Գաւրկ. Պկշիկթաշ, Իսկիւտար։	1
8 15	Ր. և Ա. Գավազկն Եկեղեմահ. Մկզար. Պկոյիւք. Թարապիա, Պկյքօպ, Եկեղք. Էմիրկկն, Պոյաճ. Ր. Հիսար, Պկպկք, Արնավ. Գաւրուշ. Օրթաքեկոյ, Պկշիկթաշ։	20
10 15	Մկզարպուրնուկն Պկոյիւքա. Թարապիա, Եկեղեկոյ, Էմիրկկն, Ր. Հիսար, Արնավ. Օրթաքեկոյ, Պկշիկթաշ։	22

Ա.Բ-Վ-Ա-Ա ԷԵՂԷՆ

11 30	Արնավուտքեկոյէն, Գաւրուշ. Օրթաք. Պկշիկթաշ։	2
12	Պկպկքէն Արնավուտ. Գաւր. Օրթաք. Պկշիկ.	22
12 30	Արնավ. Գաւրուշ. Օրթաք. Պկշիկ. Գատպաթաշ։	23
1	Արնավուտքեկոյէն, Գաւրուշ. Օրթաք. Պկշիկթաշ։	2
1 35	Արնավուտքեկոյէն, Գաւրուշ. Օրթաք. Պկշիկթաշ։ Գատպաթաշ։	22
2	Արնավ. Գաւրուշ. Օրթաք. Պկշիկթաշ, Գատպաթ։	23
2 30	Արնավ. Գաւր. Օրթաք. Պկշիկ. Գատպաթաշ։	28
10	Արնավուտքեկոյէն ուղղակի կամուրջ։	23
10 45	» » »	1

Ա-Ի-Կ-Ա-Ն ԷԵՂԷՆ

11 30	Պկյքօպ, Բաշտպ. Գանկըճա, Ա. Հիսար, Գանարկի, Վանիքեկոյ. Զկնկեքեկոյ, Պկյկրպեկոյ, Գաւրկ.	24
11 30	Վանիքեկոյէն Զկնկեկ. Պկյկր. Գաւրկ. Գատպ։	1
12 15	Պկոյիւքա. Թարապիա. Պկյքօպ, Բաշտ. Ր. փ. մահ. Գանկ. Ա. Հիսար, Վանիք. Զկնկեկ. Պկյկր. Գաւրկ.	32
1 30	Պկոյիւքա. Պկյքօպ, Բաշտպ. Գանկ. Ա. Հիսար, Գանար. Վանիք Զկնկ Պկյկ. Գաւրկ. (Ուր. օրերը ժամ 2ին)։	17
3 30	Ր. և Ա. Գավազկն Մկզարպ. Պկյքօպ, Ր. Պահճէ. Ր. փ. մահ. Սիմկն. Գանկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պկպկք, Պկյկ. Վանիք. Սիրքեճի. (Բացի ուրբաթէ)։	21
3 30	Պկյքօպ, Բաշտպահ. Ր փաշա մահալկսի, Գանկ. Ա. Հիսար, Գանար. Վանիք. Զկնկ. Պկյկ. Գաւրկ. Գատպ. (Բացի ուրբաթէ)։	2
9	Պկոյիւքա. Պկյքօպ, Բաշտպ. Գանկըճա, Ա. Հիսար, Գանար. Վանիք Զկնկեկ. Պկյկրպկյ. Գաւրկ. Իսկ. (Ուրբաթ օրերը Ր փ. մահ.)։	19
9 45	Վանիքեկոյէն ուղղակի կամուրջ։ (Բացի ուրբաթէ)։	2

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳԵՆԱՆԻԵՐԸ

Ե-ր-ր-ղ-կ-ն Է-ղ-ք-ի

1	Պկշիկ. Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկկն, Եկեղք. Թարապիա, Պկոյիւքա. Մկզարպ. Ր. և Ա. Գավազ։ (Ուրբաթ օրերը Գավազները չերթալով Եկեղեմահ)։	21
12 45	Գատպ. Իսկ. Պկշիկ. Գաւրկ. Օրթ. Պկյկ. Զկնկ. Արնավ. Գանա. Ա. և Ր. Հիսար. Գանը Էմիրկկն, Եկեղք. Պկյքօպ, Թարապ. Պկոյիւք. Եկեղեմահ։	1
1 45	Պկշիքթ. Օրթաք. Արնավ. Պկպկք. Ր. Հիսար, Պոյաճ. Եկեղք. Թարապ. Պկոյիւքա. Մկզարպ։	34
3 15	Պկշիկ. Օրթաք. Գաւրուշ. Արնավ. Պկպկք, Ր. Հիսար, Էմիրկ. Եկեղք. Թար. Պկոյիւք. Եկեղեմ։	23
5	Պկշիկ. Օրթաք. Արնավ Ր. Հիսար, Էմիրկ. Եկեղք. Պկյքօպ, Թարապ. Պկոյիւքտկրկ, Մկզարպ. Ր. և Ա. Գավազ։	20
6 30	Իսկ. Պկշիկ. Գաւրկ. Օրթաք. Պկյկ. Զկնկ. Արնավ. Գանա. Ր. Հիսար, Պոյաճ. Եկեղք. Թար. Պկոյիք։	19
8	Պկշիկ. Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Եկեղք. Թարապ. Պկոյիւքա. Մկզարպուրնուկ։	22
9 30	Պկպկք, Ր.Հիսար, Էմիրկ. Սիմկն. Եկեղք. Թար. Պկոյիք. Մկզ. Եկեղեմ. (Ուրբաթ օրերը ժամ 10ին Քիրկճպ.)։	34
10 15	Պկպկք, Ր. Հիսար, Պոյաճ. Եկեղք. Թարապ Քիրկճպ. Պկոյիւք Մկզար. Եկեղեմահ։ (Բացի ուրբաթէ)։	32
10 40	Պկշիկ, Օրթաք Արնավ. Պկպկք, Ր. Հիսար, Էմիրկ. Եկեղք. Թարապ. Պկոյիւքա. Մկզարպ. Եկեղեմ.	18
11 15	Պկպկք, Ր. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Եկեղեկոյ, Թարապիա, Պկոյիւքա. Մկզարպ. Եկեղեմահալկ։	20

Ա.Բ-Վ-Ա-Ա ԷԵՂ

12 30	Ուղղակի Արնավուտքեկոյ։	2
1	» »	22
1 30	» »	23
1 45	» »	28
9 15	Գատպաթաշ, Պկշիկթաշ, Օրթաք. Գաւրուշ. Արնավ.	23
10	Գատպաթաշ, Պկշիկթաշ, Օրթաք. Գաւր. Արնավ.	1
11 5	Գատպաթ. Պկշիկ. Օրթաք. Գաւրուշ. Արնավ։	23
11 35	Պկշիկթաշ, Օրթաք. Գաւրուշ. Արնավ։	1
12	Պկշիկթաշ, Օրթաք. Գաւրուշ. Արնավուտ. Պկպկք։	22

Ա-Ի-Կ-Ա-Ն ԷԵՂԷՆ

2 15	Պկշիքթ. Օրթաք. Ր. Հիսար, Էմիրկ. Պկյքօպ։ (Բացի ուրբաթէ)։	2
2 30	Իսկ. Գաւրկ. Պկյ. Զկնկ. Վանիք. Գանա. Ա. Հիսար, Գանկ. Բաշտպ. Պկյքօպ, Պկոյիւքա. Եկեղեմահ։ (Ուրբաթ օրերը Ր փ. մահ.)։	32
9	Գաւրկ. Պկյ. Զկնկ. Վանիք. (Բացի ուրբաթէ)։	2
9 30	Գաւրկ. Պկյկրպ. Զկնկ. Վանիք. Գանա. Ա. Հիսար, Գանկ. Բաշտպ. Պկյքօպ, Պկոյիք. Մկզ. Ր և Ա. Գավազներ։	28
10 կն	Եաքը Սիրքեճիկն Պկյկր. Վանիք. Պկպկք Ր. Հիսար, Պոյաճ. Գանկ. Սիմկն. Ր. փաշա մահ. Բաշ. Պկյքօպ։ (Բացի ուրբաթէ)։	24
10 30	Գատպաթ. Գաւրկ. Պկյ. Զկնկ. Գանա. Ա. Հիսար, Գանկ. Ր. փաշա մահ. Բաշ. Պկյքօպ, Թար. Պկոյիք։	17
11 15	Գաւրկ. Պկյ Զկնկ. Վանիք. Գանա. Ա. Հիսար, Գանկ. Բաշտպ. Պկյքօպ, Պկոյիւքտկրկ	20
11 40	Գատպաթ. Գաւրկ Պկյ. Զկնկ. Վանիք. Արնավ։	2

ԱՅԵՐԻ ՎԻԿՕՐԸ

Ով որ իր մաղերուն թափիլը չուզեր, «Այերի Վիկօր» կոչուած մազի անուշահոտ ջուրէն գործածելու է. ուրիշ ամեն տեսակ մազի ջուրերը կամ իւղերը՝ որ մազ չի թափելու համար կը ծախուին, բոլորն ալ անօգուտ են. իսկ Վիկօրի օգուտը միլիոնաւոր փորձերով տեսնուած է, և Պոլսոյ ու գաւառաց մէջ օր օրի գործածողներուն թիւը կաւելնայ։ Անոնք որ իրենց մազերուն գեղեցկութիւնը կորսնցնելու վրայ են, շուտով գործածեն առ ջուրէն որ'ի վերջոյ չզլխան։ Թափելու վրայ եղող մազերը կը հաստատէ ու կամրապնդէ, թափածներուն տեղը մազ կը բուսցնէ երբոր մազերուն արմատը ջնջուած չէ, ու ճերմկած մազերը անոր առաջուն բնական գոյնին կը բերէ, գործածելուն կերպը շիշերուն հետն է. կը ծախուի Կ. Պոլիս Դաղաթիա Մինասեան և Ընկերաց Ամերիկայի Մագազան։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱԳԱԶԱՆ

Կ. Պոլիս Դաղաթիա Մինասեան և Ընկերաց Ամերիկայի Մագազան կը ծախուի, աղեխ. ճերմակ կաուներ, ու սեղանի ծածկոց և այլն, սեղանի արծաթած պատառաքաղ, դրդայ և այլն. կազի Լամբաներ, սեղանի ճերմակ յախճապակէ սպասք Անգլիոյ տեսակէն, քարեղաններ, փիլֆ ծածկոց, քթանէ սոսան և այլն. բահանայի վերարկուներ անօթներ, կարի գործիքներ, և ուրիշ անթիւ պիտանի վաճառք կը ծախուին չափաւոր գներով։

Այս լրագիրը չարաթը երեք անգամ կը հրատարակուի. երեքշաբթի, հինգշաբթի և չարաթ օրերը։ Բաժանորդագրութեան տեղերն են Դաղաթիա Սանարքճիլար ճատտէսի թիւ 198, Դ. օրօ խան Մ. սիսի խմբագրատունը։

Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց սենեակները։

ԻԶՄԻՐ. Սահփան աղա Տէտէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Խոսրով էֆ. Լսկիճեան.
ՊՐՈՒՍԱ. Յաեփան աղա Թանկէրեան.
ԹԷՔԻՐՏԱՂ. Տ. Աբրահամ տէր քահանայ Ֆէսլեան.
ՏՐԱՊԻԶՈՆ. Խաչատուր աղա Էլմասեան
ԿԱՐԻՆ. Կարապետ աղա Ղարիբեան.
ՎԱՆ. Կարապետ աղա Դաթեանեան.
ՄՈՒՇ. Մկրտիչ աղա Փոխրլեան
ԵԱՇ. Մ. աղա Խաչիկեան
ՖՈՒՇԵԱՆ Ֆէրհատ աղա Ի Ֆէրհատեան
ԵՐԶՆԿԱՑ. Թադէոս աղա Բագրատունի։
ՍԻՎԱՍԻԱՅԻ. Սրմ. [illegible]
[illegible] քաղաքներէ [illegible] գրդներն [illegible] ազգ ակցիր։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻԹԹԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ
ԴԱԼԱՖԱ ՆՇՐՕ ԽԱՆ